SHEN
holding

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի

նախագահ պրն. Ա. Ջավադյանին

**Հարգելի պարոն Ջավադյան**

<Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ն սույն թվականի ապրիլի 30-ի գրությամբ դիմել էր Ձեզ մինչև մայիսի 8-ը ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ժամկետի երկարացման խնդրանքով: Ընկերությունը և Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ն ըստ էության ավարտել են ֆինանսական հաշվետվության կազմումը ՖՀՄՍ-ներին համապատասխան, սակայն մենք երկուսս էլ կարիք ունենք լրացուցիչ ստուգման: Այդ իսկ պատճառով խնդրում ենք երկարացնել հաշվետվության ներկայացման ժամկետը մինչև մայիսի 13-ը, որը մայիսի 8-ին հաջորդող առաջին աշխատանքային օրն է:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը պատրաստ լինելուն պես (առավելագույնը մինչև 13.05.13թ.) դրանք անմիջապես կուղարկվեն և կհրապարակվեն սահմանված կարգով:

Վերոգրյալի մասին մեր պաշտոնական ինտերնետային կայքում կտեղադրվի էական տեղեկատվություն՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի:

Հաշվի առնելով նաև վերոգրյալը, խնդրում եմ համարել հարգելի և չկիրառել օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

**Տնօրեն** **Պապ Բաղալյան**

**"Shen-Concern" CJSC**

address: 2/2 Shirak str., Yerevan 0043, Republic of Armenia

tel./fax: (+374 10) 46...

e-mail: info@shenholding.com
url: www.shenholding.com

SHEN
holding

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում 'Շեն-Կոնցեռն' ՓԲԸ-ին վերաբերող 08.05.13թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

Տնօրեն Պապ Բադալյան

**"Shen-Concern" CJSC**
address: 2/2 Shirak str., Yerevan 0043, Republic of Armenia
tel./fax: (+374 10) 46 01 01
e-mail: info@shenholding.com
url: www.shenholding.com

**08.05.13թ.**

**համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.**

<Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ն և Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ն ըստ էության ավարտել են ֆինանսական հաշվետվության կազմումը ՖՀՄՍ-ներին համապատասխան, սակայն կարիք կա լրացուցիչ ստուգման: Այդ իսկ պատճառով հետաձգվում է աուդիտի եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը մինչև մայիսի 13-ը, որը մայիսի 8-ին հաջորդող առաջին աշխատանքային օրն է:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը պատրաստ լինելուն պես (առավելագույնը մինչև 13.05.13թ.) դրանք անմիջապես կուղարկվեն և կհրապարակվեն սահմանված կարգով: